

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲՈՒԼՂԱՐԻՈ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ԲԱՉԿՈՎՈ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 900-ԱՄՅԱԿԻՆ

Ս. թ. մայիսի 28-ից մինչև հունիսի 3-ը Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցին փառաշուք հանդիսավորությամբ նշեց իր պատրիարքության վերահաստատման 30-ամյա տարեդարձը, ինչպես նաև Բաչկովո պատմական վանքի հիմնադրման 900-ամյակը:

Սույն հանդիսությանց հրավիրվել էին օրթոդոքս և ոչ օրթոդոքս Եկեղեցիների ներկայացուցիչները: Հանդիսությանց անձամբ մասնակցում էին Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն Նիկոդայոս Զ-ն, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը և Վրացական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն Իլիա Բ-ն՝ իրենց շքախմբերով:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներ, սույն հանդիսությանց իրենց մասնակցությունն էին բերում նաև Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Ռումինիայի ու Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը:

Մայիսի 27-ին, ուրբաթ օրը, Սոֆիայի օդանավակայանում Մայր Աթոռից ժամանած Տ. Հուսիկ արքեպիսկոպոսին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Սոֆիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ քահանա Պենյանը և բուլղարահայ թեմական խորհրդի ատենապետ պրն. Կարո Տեր-Մեսրոպյանը:

Մայիսի 28-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Բուլղարական Եկեղեցու Ս. Սինոդի պալատում տեղի է ունենում ընդունելություն: Բուլղարական Եկեղեցու պետ Տ. Մաքսիմ Պատրիարքը ընդունում և բարի գալուստ է մաղթում օրթոդոքս Եկեղեցիների պետերին, քույր Եկեղեցիների, ինչպես նաև էկումենիկ կազմակերպությունների բոլոր ներկայացուցիչներին:

Ընդունելության ընթացքում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու անունից պատասխան խոսքով հանդես է գալիս Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը, իսկ Հայ Եկեղեցու անունից՝ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը:

Ապա տեղի է ունենում հյուրասիրություն և նվերների փոխանակում:

Մայիսի 29-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Սոֆիայի Ալեքսանդր Նևսկի պատրիարքական տաճարում մատուցվում է հանդիսավոր սուրբ պատարագ: Հավարտ պատարագի տեղի է ունենում գոհաբանական մաղթանք խուռներամ հավատացյալ ժողովրդի ներկայությամբ: Ապա ընթերցվում է Սուրբ Սինոդի ողջույնի խոսքը՝ ուղղված քույր Եկեղեցիների պետերին և ներկայացուցիչներին, որից հետո հոգեշունչ քարոզով հանդես է գալիս Տ. Մաքսիմ Պատրիարքը՝ իր շնորհակալության խոսքն ասելով ներկաներին և բաշխելով իր օրհնությունները:

Այնուհետև հաջորդաբար խոսք են առնում Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պատրիարք Տ. Նիկողայոս Զ-ն, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Տ. Պիմենը, Վրաց Եկեղեցու Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ն, ինչպես նաև Անտիոքի, Սերբիայի, Ռումինիայի, Երուսաղեմի օրթոդոքս Եկեղեցիների ներկայացուցիչները:

Նույն օրը, ժամը 13-ին, «Սոֆիա» հյուրանոցի ընդարձակ ճաշասրահում տեղի է ունենում պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում փոխանակվում են բաժակաճառեր:

Ժամը 16-ին Տ. Մաքսիմ Պատրիարքի գլ-

խավորությամբ հյուրերն այցելում են «Վիտոշա» ազգային այգին և Դրագալևսկի վանքը: Այստեղ վանքի վանահայրը բարիգալըստյան խոսք է ասում և ապա ներկաներին հրավիրում վանքի մատուռը, ուր տեղի է ունենում երեկոյան ժամերգություն: Ժամերգությունից հետո վանքի ընդունարանում կազմակերպվում է հյուրասիրություն:

Մայիսի 30-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Սոֆիայի գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի է ունենում տոնական հանդիսություն՝ նվիրված Բուլղարական Եկեղեցու պատրիարքության վերահաստատման 30-ամյակին: Հանդիսությունը բաց է անում Ս. Սինոդի անդամ միտրոպոլիտ Պանկրատին: Ապա Տ. Մաքսիմ Պատրիարքը հանդես է գալիս բովանդակալից մի ճառով:

Հանդիսության ժամանակ ողջույնի ուղերձ է արտասանում նաև Բուլղարական ժողովրդական Հանրապետության պետական խորհրդի փոխնախագահ Միտկո Գրիգորովը:

Կարճատև ընդմիջումից հետո հանդիսավոր նիստում ողջույնի խոսքերով հաջորդաբար հանդես են գալիս տասներկու Եկեղեցիների ներկայացուցիչներ: Հայ Եկեղեցու անունից սրտագին խոսք է ասում Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը:

Օրվա երկրորդ կեսից հետո, ժամը 16-ին, նույն դահլիճում տեղի է ունենում հոգևոր համերգ Սոֆիա քաղաքի եկեղեցիների քահանայից երգչախմբի և Ալեքսանդր Նևսկի տաճարի քառաձայն երգչախմբի կատարմամբ:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքը և Բուլղարական Եկեղեցու Ս. Սինոդը, ի պատիվ հյուրերի, նույն հյուրանոցում կազմակերպում են պաշտոնական հյուրասիրություն, որի ընթացքում տեղի են ունենում բաժակաճառեր:

Հետևյալ օրը, մայիսի 31-ին, առավոտյան ժամը 8.30-ին, Տ. Մաքսիմ Պատրիարքի առաջնորդությամբ, բոլոր հյուրերը ուղևորվում են դեպի պատմական Ռիլա վանքը: Երկժամյա հաճելի ուղևորությունից հետո, երբ ավտոմեքենաների շարանը հասնում է վանքի մոտակայքը, շրջակա գյուղերից այնտեղ հավաքված հապարավոր ուխտավորներ խանդավառ արտահայտություններով ողջունում են բարձրաստիճան հյուրերին: Այնուհետև վանքի եկեղեցում տեղի է ունենում գոհաբանական մաղթանք: Այստեղ նույնպես փոխանակվում են բարիգալստյան և ողջույնի խոսքեր: Ապա հյուրերը հրավիրվում են դիտելու վանքի պատմական հուշարձանները, որոնց մասին նրանց տրվում են մանրամասն տեղեկություններ:

Հունիսի 1-ին, չորեքշաբթի օրը, ժամը 13-ին, հանդիսություններին ժամանած պատգամավորությունների ղեկավարները պետական խորհրդարանում ընդունվում են Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության պրեզիդենտ Թեոդոր Ժիվկովի կողմից:

Նույն օրը, ժամը 16-ին, հյուրերն ուղևորվում են Պլովդիվ քաղաքը: «Նովոթել» հյուրանոցում կարճ հանգստից հետո նրանք այցելում են «Սուրբ Մարինա» եկեղեցին, ուր տեղի է ունենում երեկոյան ժամերգություն: Այստեղ բարիգալստյան խոսք է ասում եկեղեցու ավագերեցը՝ ողջունելով բարձրաստիճան հյուրերին:

Երեկոյան ժամը 20.30-ին «Նովոթել» հյուրանոցում, ի պատիվ հյուրերի, տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

Հետևյալ օրը, հունիսի 2-ին, առավոտյան, Տ. Մաքսիմ Պատրիարքի գլխավորությամբ պատգամավորները ուխտագնացություն են կատարում դեպի Բաչկովո պատմական վանքը, որը գտնվում է Պլովդիվ քաղաքից մեկ ժամ հեռու, անտառախիտ լեռների մեջ, գեղատեսիլ բնության գրկում: Վանքի շրջափակը լի էր խուռներամ հավատացյալներով: Եկեղեցու կանգերի ղողանջի ներքո և եկեղեցական դասի երգեցողությամբ հյուրերն առաջնորդվում են դեպի տաճար, ուր մատուցվում է սուրբ պատարագ: Հավարտ պատարագի հոգեշունչ քարոզով հանդես է գալիս Վրացական Եկեղեցու Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ն, որը վանքի պատմականն է անում՝ վեր հանելով նրա կատարած դերը բուլղար ժողովրդի մշակութային և քրիստոնեական կյանքում: Պատարագից հետո Բուլղարական Եկեղեցու Ս. Սինոդի և հոբելյանական հանդիսություններին մասնակցող հոգևորականների կողմից կատարվում է հոգեհանգստյան պաշտոն հանգուցյալ Կիրիլ Պատրիարքի և Ստեֆան էգզարխի հիշատակին, որոնց շիրիմներին վետեղվում են թարմ ծաղիկներից հյուսված պսակներ:

Այնուհետև հյուրերը ծանոթանում են վանքին և նրա պատմական հուշարձաններին:

Կեսօրին նրանք վերադառնում են Պլովդիվ քաղաքը, ուր ժամը 14.30-ին «Նովոթել» հյուրանոցում տեղի է ունենում պաշտոնական ընդունելություն-ճաշկերույթ՝ նվիրված Բաչկովո վանքի հիմնադրման 900-ամյակին:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Բուլղարիայի մայրաքաղաքի «Սոֆիա» հյուրանոցում, ի պատիվ հյուրերի, տրվում է հրաժեշտի ընթրիք, որի ընթացքում օրհնության խոսքով հանդես է գալիս Տ. Մաքսիմ Պատրիարքը:

Հունիսի 3-ին, ուրբաթ օրը, հյուրերը հրաժեշտ են տալիս Բուլղարական Եկեղեցու Գա-

հակալին և մեկնում շնորհակալ զգացումներով ու լավագույն տպավորությամբ:

*
* *

Նույն օրը Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը և Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը Սոֆիայում այցելություն են տալիս տեղի «Երևան» մշակութային կապմակերպության վարչության նախագահ պրն. Բարիքյանին և զրույց ունենում նրա հետ բարեկամական ջերմ մթնոլորտում: Այս առթիվ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը «Երևան» մշակութային կապմակերպությանն է նվիրում «Ս. Էջմիածին» գունավոր գեղեցիկ ալբոմից մի օրինակ:

Հունիսի 5-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի տոնի առթիվ, Սոֆիայի հայոց եկեղեցում եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ է մատուցում Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը: «Հայր մեր»-ից առաջ նա քարոզում է «Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» բնաբանով: Հավարտ սուրբ պատարագի կատարվում է գոհաբանական մաղթանք Էջմիածնի տոնի առթիվ:

Այնուհետև առաջնորդարանի դահլիճում Տ. Հուսիկ սրբազանի և տեղի հայ հավատացյալների միջև տեղի է ունենում ջերմ հանդիպում, որի ընթացքում սրբազանը նրանց փոխանցում է Վեհափառ Հայրապետի օրհնությունները և բոլորին բաժանում Սուրբ Էջմիածնի բացիկներ: